

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ԴԵՐԸ ՏԵՔՍՏՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Գ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հենքը (տեքստը) , ըստ Գ. Զահուկյանի (և ոչ միայն), երկալանային բարձր մակարդակի միավոր է՝ բովանդակության և արտահայտության պլաններով: Հենք կազմող պարբերությունների ներսում, ինչպես և նրանց միջև մեծ մասամբ առկա են նույն հարաբերությունները, ինչ բարդ նախադասության (լիասույթի) բաղադրիչների միջև: Հենքի բնույթով պայմանավորված՝ փոխվում են այդ բաղադրիչների կապակցման եղանակներն ու միջոցները:

Ներհենքային կապի միջոցներ կարող են դառնալ նաև վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասերը (ծայնարկությունները և եղանակավորող բառերը)՝ վերաբերմունք հաղորդելով հենքի (տեքստի) բաղադրիչների արտահայտած մտքին: Ընդ որում, վերաբերմունքային բառերը՝ իրենց տարբեր տեսակներով և դրսևորումներով, կարող են լինել տարբեր (հաստատում, ժխտում, երկբայություն և այլն): հենքում արտահայտված նոր միտք կա՝մ հաստատել, կա՝մ ժխտել, երկբայել և այլն արդեն եղած միտքը:

Եղանակավորող բառերը և ծայնարկությունները արտահայտում են խոսողի մտածական-դատողական և զգացական վերաբերմունքը նախադասության որևէ անդամի կամ ամբողջ նախադասության մտքի նկատմամբ⁶⁸: Խոսքիմասային այդ միավորները, ինչպես գիտենք, զուրկ են նյութական իմաստից և նախադասության անդամ չեն դառնում:

Ծայնարկությունների վերաբերյալ Գ. Զահուկյանը գրում է. «Սրանք հաճախ կարելի է դիտել որպես զգայական, կամային, իմացական բնույթի բայերով արտահայտված նախադասությունների յուրատեսակ փոխակերպումներ (Վա՛յ - Ես ցավ եմ զգում և այլն)»⁶⁹:

Հենքում հաղորդողի, հաղորդակցի, հաղորդման առարկայի միջև գոյություն ունեցող հարաբերության անցումները պայմանավորված են նրանց բնույթի փոփոխությամբ (հաստատում, ժխտում, ուրախություն, ափսոսանք և այլն):

Իբրև օրինակ՝ քննենք Վ. Դավթյանի «Ասք սիրո և սրի» պոեմից մի հատված, որում իբրև բնաբան բերվող «Օ՛, սուր չառնեք, մարդիկ,

⁶⁸ Տե՛ս Ա. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965, էջ 507:

⁶⁹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Լիբանան-Անթիլիաս, «Համազգային» հրատ., 2000, էջ 27:

ընդդեմ սիրո ...» վերաբերմունքային նախադասությունը կրկնվում է մի քանի անգամ՝ խտացնելով խոսքի հիմնական բովանդակությունը.

Եվ ի՞նչ ... Սերը մեռավ ...

Աստվածներ հայոց, զայրացած ու վրդով,

Թողին իրենց գահերն ամպածրար

Ու փակվեցին մթին անձավներում ...

Աստվածներից թափուր հայոց հողին

Արհավիրքներ իջան այնուհետև ...

Հիմա լարեմ փանդիոս ու ոգելով ասեմ.

Ասեմ կրկին անգամ ու բյուր անգամ ասեմ.

Օ՛, սուր չառնեք, մարդիկ, ընդդեմ սիրո ...

Եվ բնության,

Մարդու բնության դեմ,

Օ՛, սուր չառնեք, մարդիկ, Օ՛, սուր չառնեք մարդիկ ... (Վ. Դավթյան, էջ 46)

Բնաբանի՝ «*Օ՛, սուր չառնեք, մարդիկ, ընդդեմ սիրո...*» նախադասության մեջ հաղորդողի կողմից հաստատվող հարաբերության բաղադրիչների բառերով լրիվ տրված չլինելն արտահայտված է քերականորեն՝ կախման կետերով (...), որի մասին իմանում ենք պոեմից: Պոեմի բովանդակությունը հաղորդային պլանում է, իսկ հաղորդակցային կամ, Գ. Ջահուկյանի բառերով ասած, հաղորդակցական տեքստային պլանում այն տեղեկություններն են, որոնք ի հայտ են բերում խոսողի՝ հաղորդման վերաբերյալ զգացմունքները, և խոսակցի՝ հաղորդման նկատմամբ վերաբերմունքը, գնահատումը ու հարաբերումը համատեքստին: Այնուհետև, բերված հատվածում կապակցումը կատարվում է ոչ միայն «ցավ, վիշտ» արտահայտող *օ՛* ձայնարկության միջոցով, այլև նախահենքային, առմիջուկային բաղադրիչ բնաբանի կրկնությամբ՝ նրա իններորդ և վերջին տողերում:

Մեկ այլ դեպքում ներհենքային բաղադրիչների կապակցումը կատարվում է «ափսոսանք, հաճելիություն» արտահայտող ձայնարկությամբ: Օրինակ՝ «*Կյա՛նք, դու ես հյուսում շքեղ, գարնանային անուրջները, բոլոր երգերը ծաղկաբույր, սակայն դաժան մահը ցնդում է անուրջները և երգերը չքնաղ: / Կյա՛նք, դու ես ձևում ու կաղապարում գեղեցիկ իրերը և ներդաշնակում աստղերի պարսր, սակայն անիմաստ մահը հյուծում է դաշն ձևերը գեղեցկության և թոհուրոհի վերածում աստղերի համերգը: / Ավա՛ղ և բյուր ավա՛ղ կյանքին*» (Ավ, *Իս.*, Անանդան և մահը, էջ 410):

Բերված օրինակը, իբրև մեկ ամբողջական հատված, կառուցված է երեք առանձին պարբերությամբ (բերված կից գծիկով – Ա. Բ.). լեզենդի հաղորդային պլանը նրա բովանդակությունն է, իսկ հաղորդակցային պլանում դրսևորվում են խոսողի զգացմունքները և խոսակցի վերաբերմունքը հաղորդման նկատմամբ, այլև հարաբերումը խոսքաշարին: Պարբերությունները կապակցվում են մի կողմից՝ «կյանք» բառի շեշտումով և կրկնությամբ, մյուս կողմից՝ «ավա՛ղ» ծայնարկության բացականչական կրկնությամբ՝ արտահայտելով ափսոսանքի, թերևս նաև ցավի զգացում պարբերություններում արտահայտված մտքի նկատմամբ:

Մեկ այլ օրինակ՝ «Բայց ահա պոչը և անիվները դիպան գետնին. դա վերջին դյույմն էր: Քամին պտտեց ինքնաթիռը, վերջինս տեղապտույտ տվեց և գետնի վրա շրջան գծեց, իսկ հետո հանդարտվեց և լռություն տիրեց»: / «Ա՛խ, ինչ լռություն էր, ի՛նչ անդորր: Նա ունկնդրում էր, զգում իր ամբողջ էությամբ: Եվ հանկարծ հասկացավ, որ ինքը կապրի» (Ջեյմս Օլորիջ, Վերջին դյույմը, էջ 54):

Այս երկու պարբերությունները կապակցվում են «ա՛խ» ծայնարկության միջոցով՝ արտահայտելով հաճելիության զգացում նախորդ պարբերության արտահայտած մտքի նկատմամբ: Պարբերությունները կապակցվում են նաև լռություն բառի կրկնությամբ:

Այնուհետև, Բակունցի «Այու սարի լանջին» պատմվածքի մի հատվածում, մեջբերվող խոսքը պարբերության մեջ գրավում է նախադաս դիրք, որն ուրախության զգացում արտահայտող «ջա՛ն» ծայնարկության միջոցով կապ է ստեղծում երկու պարբերությունների միջև. «Պետու ականջին հասավ կովի բառաչի ծայն, որ գյուղի կողմից էր գալիս: Նա նայեց, բառաչի ծայնը մեկ էլ լսվեց: / - Ջա՛ն, մարալ, սովա՛ծ ես մնացել, - ասեց ինքն իրեն և մտքում դրեց տավարն առավոտ կանուխ Այու սարի կողմը քշելն, ուր խոտը համեղ էր և առատ» (Ա. Բակունց, էջ 65):

Զայնարկությունները կապակցական դեր են կատարում ոչ միայն պատմողական խոսքում, այլև երկխոսություններում: Օրինակ՝ «Իրար առողջություն հարցնելուց ետը հյուրերը սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմությունը, և դուրս եկավ մի ահագին պատմություն: /- Օ՛Ֆ, սիրտս մաշել է, - գանգատվում էր տիկին Նատոն, թե իմանաք՝ ինչ եմ քաշում ես դրա ձեռիցը: Ասում եմ՝ դուրս անենք կորչի, բայց դե Արտեմի բնավորությունը գիտեք էլի, ասում է՝ մեղք է, գեղացի երեխա է, թող կենա, մի կտոր հաց է, ուտի, կսովորի ... Ախր էլ երբ ... սիրտս մաշեց ... : / - Օ՛հ, օ՛հ, օ՛հ, էդ ծառաների բանն էլ մի՛ ասի, - էս ու էն կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը» (<. Թումանյան, «Գիքորը», չֆ 319):

Այստեղ դրսևորվում են, հաղորդման հետ կապված, խոսողի դժգոհությունը և խոսակցի՝ հաղորդման նկատմամբ վերաբերմունքը և

հարաբերումը համատեքստին (կոնտեքստին): Պարբերությունները կապակցվում են «օժ, օ՛հ, օ՛հ, օ՛հ» դժգոհություն արտահայտող ձայնարկությունների միջոցով:

Ներհենքային կապի միջոց են, ինչպես նշեցինք, եղանակավորող բառերը: Օրինակ՝ Վ. Դավթյանի «Ասք Մաշտոցի մասին» պոեմից, որի բնաբանն է՝ «Խոսեց մեր լեզուն, // Հոգուն թն դարձավ ու հանճարին՝ սյուն» նախահենքային, առմիջուկային բաղադրիչը.

«Ապրելու համար մեզ զարմանալի այդ հրաշքն էր պետք ...

Եվ գեղջուկ մի այր,

Որ զորական էր, սրի տիրապետ,

Հանճարեց, խորհեց,

Որ անհնար է այդ սուրբ հրաշքը լոկ սրով անել,

Որ այդ հրաշքի արարման համար

Պետք է լույս հանել ...

Հրաշքի համար, *այո*,՝ լույս էր պետք»:

Պոեմի բովանդակությունը տրվում է հաղորդային պլանով: Հաղորդակցային պլանի տեղեկությունները առաջացնում են խոսողի վերաբերմունքը հաղորդման վերաբերյալ, խոսակցի գնահատականը՝ հաղորդման նկատմամբ «*այո*» հաստատական եղանակավորող բառով և հարաբերումը խոսքաշարին:

Մեկ այլ օրինակ ժամանակակից մամուլից՝ «Հին աշխարհի գրողի մտքով իսկ չէր անցնում արժևորվել իր ժամանակակիցների կողմից: Հին Եգիպտոսի գրողը համոզված էր, որ գիրն ավելի երկար կապրի, քան բուրգերը: *Արդարև*, այդպես է» («Գրական թերթ», 11. 12. 2015 թ.): Բերված օրինակից երևում է, որ տվյալ տեղեկություններից ելնելով՝ խոսողն արտահայտում է իր վերաբերմունքը հաղորդման վերաբերյալ, իսկ խոսակիցը՝ իր գնահատականը հաղորդման նկատմամբ «*արդարև*» հաստատական եղանակավորող բառով և հարաբերումը համատեքստին (կոնտեքստին):

Հաստատական վերաբերմունք կարող են արտահայտել եղանակավորող բառերը՝ որպես ներտեքստային կապի միջոց, նաև երկխոսության ժամանակ: Օրինակ՝ «Ես այդ չեմ հարցնում: Ուզում եմ ասել՝ հասկացա՞ր, որ բարեկամս, որի անունից անում եմ պատմությունը, այդ ես ինքս եմ: */-Իհարկե*, դա գրական մի որոշ ձև է: */-Էլի չհասկացար*: Ուզում եմ ասել, որ պատմվածքիս հերոսը ես ինքս եմ, և ամբողջ պատմվածքն էլ զուտ իրողություն է: */-Այդ ես չգիտեի*» (*Նար-Դոս*, «Սպանված աղավնի», էջ 357):

Բերված օրինակում «*իհարկե*» եղանակավորող բառը գործածվել է իբրև պատասխանական բառ, որով էլ հաստատվում է խոսակցի միտքը հաղորդման վերաբերյալ՝ դառնալով յուրօրինակ կապակցման միջոց:

Երկխոսության ժամանակ կապակցական դեր են կատարում «*այո*» և «*ոչ*» պատասխանական եղանակավորող բառերը, որտեղ «*այո*»-ն ունի նաև նախադասության արժեք: Օրինակ՝ «Կռապաշտները, որ ամոթահարված և քստմնած էին, այդ ծայրահեղ եղեռնագործությունը տեսնելով՝ էլ չհամբերեցին, և բարձրաձայն աղաղակեցին. «Մեծ է քրիստոնեից աստվածը, դժոխք է մեհյանը, դևեր են կուռքերը, սատանայք են քուրմերը, կոտորենք, ջնջենք, սատկացնենք սրանց ...: /- Ո՛չ, ո՛չ, - գոչեց թագուհին, սպասեցեք, չմոտենաք տաճարին, ձեռք չտաք քուրմերին, նրանց պատժելու իրավունքն իմն է: / - Ուրեմն դու հոժա՞ր ես մի արհեստ սովորելու, - հարցրեց մայրը: / - Այո՛: /- Բայց ուղիղն ասա, ինչո՞ւ համար ես ուզում սովորել, արհեստի կարևորությունն զգալով, թե՞ Անահիտին արժանանալու համար» (Ղ. Աղայան, «Անահիտ», չֆ 356):

Բերենք մի հատված Վրթ. Փափագյանի «Լուր-դա-լուր» պոեմից, որտեղ ներտեքստային կապակցման միջոց է «*մի՞թե*» երկբայական եղանակավորող բառը: «Լո՛, լո՛, լո՛, Սև ջրի չոբան, սար ու ձորը մղկտացնող, ջիվան, գազան մեղմացնող, քար ու ծառ հուզող չոբան: Ինչո՞ւ հիմարի պես հավատացիր աղային, ինչո՞ւ բարձրացար ծայրն աշտարակի...: /Լո՛, լո՛, լո՛ ... Մի՞թե քուրդն այնքան անազնիվ եղավ, որ սերը ծաղրեց: Մի՞թե նրա խիղճը կորավ, աստվածը մոռցավ: Խեղճ Հասոյին ինչո՞ւ շեյթանի բաժին արավ, աշխարհը լաց ու սուգի մեջ դրավ ... Լո՛, լո՛, լո՛...»

Հաղորդակցային պլանից տեղեկանում ենք այն ամենի մասին, որի հաղորդման վերաբերյալ խոսողի վերաբերմունքն է դրսևորվում և խոսակցի երկբայական գնահատականը հաղորդման նկատմամբ և հարաբերումը համատեքստին: Բերված օրինակում երկու պարբերությունները և երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը կապակցվում են «*մի՞թե*» եղանակավորող բառով և «*լո՛, լո՛, լո՛*» ձայնարկության կրկնությամբ:

Այնուհետև, Ալ. Շիրվանզադեի «Քառս» վեպից բերվող հետևյալ հատվածում պարբերությունները կապակցվում են «*ահա*» ցուցական եղանակավորող բառով. «Նա բավական հայտնի գործարանատեր էր, խելոք վաճառական. այսքանը հերիք էր: Նա գիտեր իր դիրքը պահպանել բոլորի մոտ և ոչ մի առիթ ձեռքից բաց չէր թողնում իր վարկն այսպես կամ այնպես բարձրացնելու համար: /Ահա այսպիսի առիթ համարեց նա թեմական առաջնորդի ներկայությունը և մի օր նրան հրավիրեց ճաշի իր գործարանը, որ գտնվում էր Սև քաղաքում: / Սև քաղաքը, արդարև, սև էր, որպես կախարդական մի աշխարհ, որ

կրում էր իր վրա աստվածային անեծքի դրոշմը: Գիշեր-ցերեկ ծխնելույզներից առատորեն դուրս սլացող մուրը ներկում և ապականում էր ամեն ինչ, որ կար այստեղ, սկսած շինանյութերից մինչև երկինքն ու թռչունները»:

Բերված օրինակում երկրորդ պարբերությունը կապակցվում է առաջինի հետ ահա ցուցական եղանակավորող բառով և «*առիթ*» բառի կրկնությամբ, իսկ երրորդ պարբերությունը կապվում է երկրորդ պարբերության հետ «*սև քաղաք*» բառակապակցության կրկնության միջոցով, որի սև լինելը հաստատվում է «արդարև» եղանակավորող բառով՝ իբրև խոսակցի գնահատական հաղորդման վերաբերյալ և հարաբերումը համատեքստին (կոնտեքստին):

Հ. Թումանյանի «Եղջերուի մահը» պատմվածքի հետևյալ հատվածում կապակցումը կատարվում է տարբեր իմաստ արտահայտող վերաբերմունքային բառերով. «Անտառը հառաչանքով լիքն էր: / Աշնան չարագույժ ցրտերն ու անգութ որսկանները մտել էին նրա մեջ ...: / Այստեղ ու այնտեղ որոտում էր որսկանի հրացանի ձայնը. անտառը թնդում, արծագանք էր տալիս, և ամեն արծագանք տալով՝ կարծես թե ահագին «վա՛յ» էր կանչում իր խոր թավուտներից: *Ճիշտ որ վա՛յ ...* : / Կորչում էին նրա պայծառ օրերը, ընկնում էին նրա դալար զարդերը, հալածվում ու կոտրվում էին նրա սիրուն երեսերը՝ և ...հառաչում էր նա: *Չէ՞ որ* նա էլ գիտի զգալ, *չէ՞ որ* այստեղ էլ կենդանության շունչ կա, ցավ ու կսկիծ կա: / *Ահա* վերջին տագնապի մեջ է անտառի չքնաղ թագուհին: Որսկանի ձեռքից փախած՝ նա վայր էր ընկել բրնձուտում»:

Հաղորդային պլանում պատմվածքի բովանդակությունն է: Հաղորդակցային պլանում անտառի վերաբերյալ տեղեկություններն են, որոնք ի հայտ են բերում խոսողի վերաբերմունքը հաղորդման կապակցությամբ և խոսակցի՝ գնահատականը վերջինիս նկատմաբ («ճիշտ որ վա՛յ, չէ՞ որ, ահա») և հարաբերումը համատեքստին: Այս հատվածի պարբերություններից առաջինը բուն մտքի ընդգծման նպատակով առանձին նախադասությամբ է արտահայտված: Երկրորդում արտահայտված միտքը հաստատվում և կապակցվում է «*ճիշտ որ*» եղանակավորող բառով և *վա՛յ* ձայնարկությամբ: Իսկ երրորդ պարբերության վերջին նախադասությունը *չէ՞ որ*—հարցական եղանակավորող բառով է կապակցվում նախորդող նախադասությունների արտահայտած մտքին: *Ահա* ցուցական եղանակավորող բառով խոսակցի գնահատականն է տրվում հաղորդման վերաբերյալ և հարաբերումը համատեքստին (կոնտեքստին):

Այսպիսով՝ բացի ավանդական քերականական կապի միջոցներից և նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից, ձայնարկությունները և վերաբերականները ևս կարող են դառնալ ներհենքային (ներտեքս-

տային) կապի միջոցներ՝ արտահայտելով զգացական (*ա՛խ, վո՛ւշ, ջա՛ն* և այլն), դատողական (*այո, իհարկե, մի՞թե* և այլն) վերաբերմունք հենքի (տեքստի) բաղադրիչների արտահայտած մտքին:

А. Г. Барсегян - Связная роль слов выражающих отношение в тексте. Помимо традиционных грамматических средств связи и значимых частей речи междометия и наречия также могут быть текстовыми средствами связи, выражающие чувственное (ах, вах, джан), рассудительное (айо, иарке, мите) отношение к мыслям текстовых компонентов.

A. G. Barseghyan - The cohesive role of words expressing attitude in text. Besides the traditional grammatical means of connection and meaningful parts of speech the interjections and referings can also be textual means of connection expressing sensual (akh, vakh, jan), judgmental (ayo, iharke, mite) attitude towards the thought of text components.